բեկտոր Գ. Գալոյանը, Հայկական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Վ. Համազասպյանը, Ռուսական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Հ. Հակոբյանը, Հայկական ՍՍՌ արխիվային վարչության պետ Ա. Հարությունյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանը և Ս. Երեմյանը, Հորելյարի մասնության բնկեր բանաստեղծ Գ. Գրիգը, Էջմիածնի միջնակարգ դպրոցի ուսմասվար Կ. Նազարյանը և ուրիշներ։

Այնուհետև հրապարակվեցին բազմաթիվ հեռագրեր, որոնցով ողջունում ու շնորհավորում էին Վ. Հ. Ռշտունուն նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ե. Փոլինյանը, եղբայրական Վրաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր ակադեմիկոս Բերձենիշվիլին, Ադրբեջանի պետական համալսարանի ՍՍՌՄ պատմության ամբիոնի դասախոսները, Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական աշխատողները, Սուխումի հայկական միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու երեսաց սաները և շատ ուրիշներ։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հորելյարը։

Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը սույն թվականի ապրիլի 24-ին միացյալ նիստում հանդիսավոր պայմաններում նշեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Տուրգեն Գրիգորի Սևակի (Գրիգորյան) ծննդյան վաթսունամյա և գիտական-մանկավարժական գործունեության երեսունհինգամյա հորելյանը։

Գուրգեն Սևակը ծնվել է 1904 թ. ապրիլի 26-ին Թբիլիսիում, կոշկակարի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում։ 1924 թ. Դ. Սևակը ընդունվում է Երևանի պետական համալսարան, որն ավարտում է 1928 թ.։ 1929 թ. ընդունվում է ասպիրանտուրա, նույն թվականին էլ սկսում է դասախոսել համալսարանում, 1937 թ. ՀՍՍՌ լուսժողկոմատը նրան շնորհում է դոցենտի կոչում։ 1932—1939 թթ. նա ղեկավարել է Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայոց լեզվի սեկցիան։ 1940 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1948 թ.՝ դոկտորի աստիճան։ 1941 թ. մինչև այսօր պրոֆ. Սևակը ղեկավարում է համալսարանի հայոց լեզվի ամբիոնը։ Երկար տարիներ պրոֆ. Սևակը միաժամանակ գլխավորել է ակադեմիայի ժամանակակից հայոց լեզվի սեկտորի աշխատանքները, դասախոսություններ է կարդացել Լենինականի, Բաքվի, Թբիլիսիի բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Բեղուն է եղել պրոֆ. Սևակի գրիչը և հարուստ՝ նրա գիտակցական կյանքի անցած ուղին։ Հանրաճանաչ են նրա շատ արժեքավոր ուսումնասիրությունները հայոց լեզվի տեսության, պատմության, ոճագիտության, լեզվաշինարարության մասին։ Նա առաջին լեզվա-

բաններից մեկն է Հայաստանում, որ մարքսիստական սկզբունքներով է քննում լեզվի և մտածողության, լեզվի և հասարակության փոխհարաբերության, լեզվի զարգացման հարցերը։ Նրա «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» (1932), «Լենինն ու դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ» (1934), «Խոսքի մասերի ուսումները» (1939) ծավալուն ու մեծարժեք հոդվածները հայ մարքսիստական լեզվաբանության լավագույն գործերից են։ Նրա «Ժամանակակից հայոց լեզվի տե-

ությունը» (1939), որի երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 1955 թ. «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» խորագրով, արժեքավոր ներդրում է հայագիտության մեջ։ Այդ գրքում պրոֆեսորը իր երկարամյա ուսումնասիրությունների շնորհիվ տվել է ժամանակակից հայերենի կազմավորման, նրա համակարգի, հասարակական կյանքի, զարգացման օրինաչափությունների ու հեռանկարի ընութագիրը։ Հայ լինգվիստիկայի առաջին անգամ այդ գրքում գտնում է հնչույթի ու ձևույթի գիտական ճիշտ ու հստակ մեկնաբանությունը, և իզուր չէ, որ հայագիտության մեջ նրան է տրվել հնչույթի և ձևույթի, ինչպես և շարույթի տեսության հեղինակային պատիվը։

1948 թ. լույս տեսավ Ռ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը», ուր տրված է արևելահայ գրական լեզվի պատմության ճիշտ շրջաբաժանումը, որը և ընդունվեց հայագիտության մեջ։ Հրոդի երկի լեզվի ուսումնասիրության, մանավանդ Հովհ. Թումանյանի լեզվի մասին այդ գրքում առաջ քաշված գրույթները մեծապես օգնում են գեղարվեստական երկի լեզուն ու ոճն ուսումնասիրող մասնագետներին։ Նա առհասարակ գործուն մասնակցություն է ունեցել սովետահայ գեղարվեստական գրականության լեզվի կարևոր ու հրատապ հարցերի քննարկմանը։

Մեր մտավորականության և առհասարակ ընթերցող հասարակության մեջ լայն ճանաչում են գտել նրա՝ հայոց գրերի սկզբնաղբյուրների պարզաբանման, Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը լուսաբանող գիտական ուսումնասիրությունները, որպիսիք են՝ «Թե ինչ արեց Մաշտոցը Սամոսատում» (1947), «Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը» (1962), «Մեսրոպան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և աղբյուրները» (1964) աշխատությունները։ Պրոֆ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն»-ը 1934 թ. մինչև այսօր մնում է իրրև դպրոցական լավագույն դասագիրք։

Արգասավոր է եղել պրոֆեսորի նաև մանկավարժական գործունեությունը։ Գրականագետների ու գրողների, լեզվաբանների ու ուսուցիչների, ժուռնալիստների սերունդներ են դաստիարակվել նրա մոտ։ Նրա աճեցրած բազմաթիվ ասպիրանտներ այսօր դարձել են գիտության թեկնածուներ, դոկտորներ, պրոֆեսորներ։ Պետական համալսարանում նրա ջանքերով հիմնադրվեցին հայ ոճագիտության, արևելահայ գրական լեզվի պատմության, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության դասընթացները, նա է եղել դրանց առաջին մշակողն ու դասախոսողը։

1956 թ. պրոֆ. Սևակը ընտրվեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Սովետական կառավարությունը բարձր է գնահատել նրա գիտական-մանկավարժական գործունեությունը՝ նրան շնորհելով Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Հոբելյարին ողջունեցին ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտությունների ակադեմիայի ինստիտուտների և մի շարք մինիստրությունների ներկայացուցիչներ։ Նիստի վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Օ. ԴՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ.